

**Երագունքս մի մաքի
Մոտքս եկավ հարցմունքի.
– Աստված պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ձագի...**

Հովհ. Թումանյան

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱՆԱՏՈՄԻԱՆ*

Բանալի բառեր – ինքնություն, անվտանգություն, ռեզերվացիա, մուրձ, սալ, սորոսականներ, ռուսուլմաններ, թուրքական գուլում, ռուսական ձուլում:

Ղարաբաղյան երկրորդ պատերազմի հետևանքով մեր գոյատևման հին հենասյունները խարխուլվել են, իսկ նորերը դեռևս չեն ձևավորվել, ուստի հայտնվել ենք ինքնության խոր ճգնաժամի մեջ:

Անցած երեսնամյակում Հայաստանի Հանրապետություն–Արցախի Հանրապետություն–Սփյուռք եռամիասնության ազգային տեսլականը բյուրեղացնող **ազատ Արցախը** հայտնվել է **ազատ աշխարհի** հետ դիմակայության մեջ գտնվող Ռուսաստանի ու Թուրքիայի համատեղ վերահսկողության գոտում: Ռազմավարական առումով կողմերի նպատակները նույնն են՝ ինչպես 20-րդ դարի 20-ական թվականներին, իսկ ահա դերերը փոխվել են. այն ժամանակ Ռուսաստանը՝ մուրձի, իսկ Թուրքիան՝ սալի դերում էր, իսկ այժմ Թուրքիան ու Ադրբեյջանը հայտնվել են մուրձի, իսկ Ռուսաստանը՝ սալի դերում:

Նույնն է մնացել նաև մեզ հատկացվող **գոհի** «գործառույթը»: Ուստի պատերազմի հայ գերիներին վերադարձնելու փոխարեն՝ հաղորդակցության ուղիները վերաբացելու փորձերը Հայաստանին Ադրբեյջանի ճանապարհներից ու գազամուղներից կախման մեջ դնելու «կայսերական խորամանկության» արտահայտություն են: Հայաստանը ռեզերվացիայի վերածող նման «միջոցառումները» ցույց են տալիս, որ ճիշտ էին մեր նախորդ ԽՂՍԲԳՐԱԿԱՆում առկա պնդումները Ռուսաստանի ու Թուրքիայի Գլխավոր շտաբների մակարդակով Հարավային Կովկասում փոխադարձ ազդեցության գոտիների տարանջատման մասին, ինչը ենթադրում է կողմերի գերա-

վել համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) փարի, թիվ 1 (73), հունվար-մարտ, 2021

* Ընդունվել է տպագրության 20.03.2021:

կայությունները համապատասխանաբար՝ Ղարաբաղում ու Նախիջևանում: Այդ համատեքստում են նաև «Մեղրիի միջանցքի» հարցով Ադրբեջանի նախագահի վերջին հոխորտանքները՝ եթե ռուսական կողմին «տեղ է տրվել» Ղարաբաղյան գոտում, ապա իրենք նույնն են ակնկալում Նախիջևանյան գոտում, որի շարունակությունը Զանգեզուրն է:

Սրանից հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ են Արցախի հաշվին Թուրքիայի հետ առևտրի մեջ հայտնված մոսկովյան քաղաքագետները մեր առջև դնում թուրքական վիլայեթի վերածվելու կամ՝ Ռուսաստանի կազմ մտնելու երկրնտրանքը, որովհետև այս ամենից հետո չեն պատկերացնում հայկական բուֆերի գոյությունը: Այսօր **միայն քաղաքակիրթ աշխարհին է ձեռնտու անկախ Հայաստանի պահպանումը՝ ռուս-թուրքական սալի ու մուրձի արանքում:** Իսկ դա ապացուցում է, որ անցած պատերազմում գործ ենք ունեցել ոչ թե միակողմանի դավաճանության, այլ որոշակի «խմբերի» միջև ծավալված **դավաճանության մրցույթի**¹ հետ:

Դեռևս «Վեմ»-ի 2017 թ. թիվ 4-ի Խմբագրականում արձանագրել էինք, որ «Հիմնականում՝ արտաքին աղբյուրներից սնվող նման խմբերի դրսից արագացվող «բուժման» պայմաններում մեզ՝ հայաստանցիներին համար անհայտ է մնում, թե ո՞վ է այդ դեպքում ժամանակակից ըմբռնումով **հայր**»²: Մեր ինքնության ճգնաժամի մասին վկայող այս ահազանգն անցած տարիներին անհրաժեշտ ուշադրության չի արժանացել: Ուստի պատերազմից հետո նման «խմբերից» առավել ակտիվները՝ իբր թե արևմտյան արժեհամակարգի կրող, այսպես կոչված՝ **սորոսականներ**³ և պատերազմից հետո կրկին ջրի երես դուրս եկած՝ ռուսական քրեաօլիգարխիայի երկրպագու **ռուսուլմաններն** իրականացնում են մեր համամարդկային ու ազգային տեսլականների դաժան բռնաբարությունը: Իրականում ո՛չ առաջինները որևէ կապ ունեն ազատության գաղափարի հետ և ո՛չ էլ երկրորդները՝ ազգային գաղափարախոսության: Սրանք պարզապես ժամանակից շուտ փորձում են բեմականացնել թուրք-ադրբեջանական մուրձի ու ռուսական սալի արանքում սեղմվող անկախ Հայաստանի հոգեհանգիստը: Ընդ որում՝ իբր թե արևմտամետ իշխանությանն իրականում վերապահվել է **թուրքական մուրձի**, իսկ նրա կայսերապաշտ ընդդիմախոսներին՝ **ռուսական սալի** տեղայնացման խնդիրը, ինչը **անկախության գաղափարի ու անկախականության** ոչնչացման և Հայաստանն ազդեցության գոտիների բաժանելու փորձ է:

1 Տե՛ս Մեր անհաջողությունների խորքային պատճառները, «Վեմ», 2020, N 4, էջ 8:

2 Տե՛ս Ո՞վ է հայր, «Վեմ», 2017, N 4, էջ 4:

3 Ժամանակը ցույց տվեց որ Հայաստանում առկա **սորոսականության** խրտվիլակի խաղարկումը պարզապես Արցախը թիրախավորելու քաղաքական տեխնոլոգիա էր ուրիշ ոչինչ: Չմոռանանք, որ նման մի խրտվիլակ ժամանակին կիրառվել է նաև Ուկրաինայում՝ կեղծ արևմտամետների ծեռքով Դրիմի ու Դոնբասի հանձնումն ապահովելու համար:

Առաջին՝ թուրքամետ տեսակի «բուծումն», առայժմ սողացող բնույթ ունի, ուստի պատահական չէ, որ մարտի 20-ին Արագածոտնի մարզում արտահերթ խորհրդարանական ընտրությունների մեկնարկն ազդարարած ՀՀ վարչապետի ելույթում հնչում է հետևյալ բառախաղը՝ «Բայց այս տարածաշրջանում մեր ապրելու կամ այս տարածաշրջանի ամենամեծ խնդիրը ո՞րն է՝ հետևյալն է, որ մեզ ընկալում են որպես թշնամի, և մենք ընկալում ենք որպես թշնամի: Քանի մեզ ընկալում են որպես թշնամի, այնքան մենք ընկալում ենք որպես թշնամի: Ինչքան մենք ընկալում ենք որպես թշնամի, այնքան մեզ ընկալում են որպես թշնամի: Նույնիսկ շատ դժվար է գտնել այն մեկնարկային կետը, որից այս պրոցեսը սկսվել է: Եվ ի՞նչ պետք է արձանագրենք՝ առաջինը, որ այս փակ շղթան պետք է ինչ-որ ձևով կառավարվի: Որովհետև սա ամենամեծ մարտահրավերն է, որ մենք էլ ունենք, և ուրիշներն էլ ունեն: Հետևաբար, քանի մեզ են համարում թշնամի՝ մենք ենք համարում թշնամի, քանի մենք ենք համարում թշնամի, մեզ են համարում թշնամի»⁴:

Հարց է առաջանում՝ ո՞րն է ՀՀ վարչապետ կոչվող անձի, իսկ քիչ անց նաև՝ ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղարի բերանով մեզ մատուցված նման տարօրինակ հարցադրման նպատակը, երբ բոլորս հասկանում ենք, որ **թուրքերի կողմից հայերին թշնամի համարելու իրողությունը որևէ կապ չունի այն բանի հետ, թե մենք՝ հայերս, մեզ համարո՞ւմ ենք նրանց թշնամի, թե՞ ոչ:** Սա այնքան պարզ ու ժամանակով փորձարկված ճշմարտություն է, որ ապացուցման կարիք անգամ չունի: Ուրեմն՝ ինչո՞ւ է ասվում մի բան, որն ակնհայտորեն չի տեղավորվում հայկական ինքնության շրջագծում: Որովհետև իր խոսքերով՝ «տարածաշրջանում մեր ապրելու համար» ՀՀ վարչապետն առաջադրել է հայկական **ինքնության փոփոխության** հարցը:

Ինքնության փոփոխության **երկրորդ տարբերակն** է ուրվագծվում Լեոնային Ղարաբաղի Հանրապետության գոյության արժեքային ենթահողի քայքայման վերջին փորձերի հետնախորքում: Դրանք ակտիվանում են Ղարաբաղը, իսկ հնարավոր է նաև Զանգեզուրը ռուս-թուրքական «կիսակայարանի» վերածելու ծրագրի համատեքստում: Ուստի Բուն Աղվանքի պատմական ժառանգությունը Հայոց Արևելից կողմանց վրա տարածելու ադրբեջանական աճպարարությունն այսօր օգտագործվում է ո՛չ միայն Արցախի վանքերն ու եկեղեցիները աղվանական հռչակելու և իր պատանդ-ուղիների տրամադրելու ալիևյան աճպարարության տեսքով: Նման մոտեցմանը միանգամայն համահունչ է Ռուսաստանի նախագահի ու արտգործնախարարի մակարդակով հնչեցվող՝ Ղարաբաղի **քրիստոնեական ժառանգության** պահպանման պահանջը: Հարց է առաջանում՝ հայկականից բացի ուրիշ ի՞նչ

4 <https://hetq.am/hy/article/128796>

քրիստոնեական ժառանգություն կա Արցախում: Պատասխանը պարզ է՝ Արցախի հայկական ինքնության «քրիստոնեականացումը» նրա «սպիտակ» հայաթափման սկիզբն է:

Այսինքն՝ մեզ փորձում են հրել դեպի հետ՝ դեպի 19-րդ դար, երբ պետականազուրկ հայերին ստիպում էին ընտրություն կատարել՝ **թուրքական գուլումի և ռուսական ձուլումի** միջև: Այդ պատճառով Հայաստանի ինքնիշխանության դեմ ուղղված ոտնձգությունները մեր ներքում ստանում են ժամանակին հայոց ազգային ինքնության քայքայման համար ցարական Օխրանայի կիրառած՝ «պահպանողականների» ու «բարեփոխականների» պայքարի տեսք, որոնցից վերջինին հատկացվում է **ապագազայնացման** գործառույթը: Ուստի **սևերի** ու **սպիտակների, նախկինների** ու **ներկաների** դիմակայության երկանդամ բանաձևերն իրականում ոչ թե ազգային առաջընթացի, այլ **ապագազայնացման գործիքներ** են դառնում: Ժամանակին հայ ազգի **մեկության** աշխարհայացքային մեկնակետով առաջնորդվող հայ ազատամարտը թույլ տվեց խուսափել «բարեփոխականների» հաղթանակի միջոցով՝ հայոց ազգային ինքնության ծայրահեղ ազատական կամ՝ բոլշևիկյան նենգափոխումներից: Որովհետև հայ ազգի մեկության **արժեքային հենքը** հայկականության համար միշտ էլ մսաղացի վերածվող՝ «պահպանողական»-«բարեփոխական» կարուսելից դուրս է՝ մեր ինքնության մեջ ի սկզբանե առկա ազատության ձգտումի ու ավանդապաշտության **ներդաշնակ համադրության** մեջ: Դա է պատճառը, որ հետագայում մեզանից են սկզբնավորվել և՛ ազատության գաղափարը՝ պավլիկյաններ-բոգոմիլներ-ալբիգոյցիներ շղթայով տարածվելով ողջ եվրոպական մայրցամաքում, և՛ արևելաքրիստոնեական քաղաքակրթությանը բնորոշ ավանդական արժեքները, որոնք այսօր փորձ է արվում մեզ մատուցել Ռուսաստանում դրանց հետ տեղի ունեցած մոնղոլ-թաթարական ձևախեղումներով: **Մենք «և՛, և՛» ենք, քաղաքակրթական նախահիմք ու միաժամանակ՝ մարդկային նախնական-ամբողջական տեսակ:** Ուստի ինչպես հրեածին տրոսականության խրտվիլակի խաղարկումը որևէ կապ չունի մեր պատկերացրած՝ ազատության ու արդարության հետ, այնպես էլ Կ. Պոլսի Սուրբ Սոֆիայի տաճարը մզկիթի վերածելը Թուրքիայի ներքին գործը համարող «ավանդապաշտությունը»՝ խաչապաշտ թագավորի մասին բուն հայկական պատկերացումների հետ: Հիշենք, որ մեր խոնարհ նախնիները հավատարմության երդում են տվել ո՛չ թե բյուզանդական կամ ռուսական կայսրերին, այլ **խաչապաշտ թագավորներին**՝ առաջին քրիստոնյա ազգի ֆիզիկական գոյության ապահովման համար:

Մենք չենք նմանակել նաև լուսավորության դարում կրկին հայկական ինքնության քաղկացուցիչը դարձած՝ ազատության գաղափարի եվրոպական ընկալումը, այլ սոսկ վերաթարմացրել ենք նրա մասին մեզանում **ի սկզբանե առկա** պատկերացումները: Ուստի քաղաքակրթության նախահիմք երկրին՝

Հայաստանին ու քաղաքակրթական թախտոր տեսակին՝ հային պարբերաբար պարտադրվող «պահպանողական»-«բարեփոխական» դիմակայությունները մեզանից նորանոր «**Կարս**»-եր ու «**Շուշի**»-ներ կորզելու փորձեր են: Եվ ինչպես ժամանակին հայ ազատամարտը թույլ տվեց միաձուլել օտարի կողմից պառակտվող մեր հանրույթը, այնպես էլ այսօր հայ ազգի մեկության աշխարհայացքային մեկնակետերից բխող Հայաստանի **ինքնիշխանության** համար պայքարը կարող է տապալել մեզ պառակտելու նորանոր փորձերը՝ ստեղծելով մեր հին ինքնության նոր կերպավորումը, **նոր համաձուլվածքը**:

Սեփական ինքնության խորքային բաղադրիչների նորացման փոխարեն՝ իրենց ուժն ու եռանդը արհեստական օրակարգերի վրա սպառող ժողովուրդներն իջնում են պատմության թատերաբեմից, իսկ նրանց մշակույթի հուշարձանները բարբարոսների ոտքի կոխան են դառնում, եթե չեն կարողանում ձևավորել ինքնիշխանության գաղափարի վրա հիմնված **համազգային օրակարգ**:

Իսկ դրա համար **նախ**՝ հարկավոր է դրսևորել արժանապատիվ կամք և հանգիստ ու անվրդով վճռականություն՝ հայ ազգի մեկության աշխարհայացքային մեկնակետից մեր ինքնության համար անզիջում պայքարը հունավորելու համար:

Երկրորդ՝ հարկավոր է բացել մեր պատուհանները՝ բարենպաստ քամիների առջև, որովհետև ներկայումս ռուս-թուրքական համատեղ ակտիվությունը սահմանափակելու բոլոր փորձերը, ո՛ւմ կողմից էլ դրանք ձեռնարկվեն, օբյեկտիվորեն նպաստելու են մեզ վրա գործադրվող ճնշումների թուլացմանը:

Երրորդ՝ հարկավոր է հաշվի առնել այն իրողությունը, որ գլոբալ ուժերի դասավորությունը փոխվում է մեր օգտին. անցած պատերազմում մեր դեմ հանդես եկած բրիտանացի **Բորիսի**⁵ ու իսրայելցի **Բենիամինի**⁶ ականջներն արդեն ձգել են, իսկ Իրանի հետ իր 400 միլիարդանոց գործարքով մեր հարավային սահմանագծին է մոտենում Հարավային Կովկասում տեղի ունեցողից անհանգստացած Չինաստանը:

Ռուս-թուրքական սալի ու մուրճի ժամանակավոր վերադարձը Հարավային Կովկաս Առաջին աշխարհամարտի վերջնամասում անավարտ մնացած պատմության **վերախաղարկման** սկիզբն է միայն: Ներկա գլոբալացող աշխարհի համար Լենինի ու Աթաթուրքի նորօրյա ուրվականների նման հանդգնությունը ո՛չ թե Հայոց, այլ համաշխարհային պատմությանը նետված մարտահրավեր է: Ուստի՝ մեզ հարկավոր է օր առաջ դադարեցնել այդ աշխարհաքաղաքական դիմագրվելից Ղարաբաղյան երկրորդ պատերազմում հոշոտված մեր գառնուկ-զավակների **համը պարզելու** ստորացուցիչ,

5 Վարչապետ Բորիս Ջոնսոն:
6 Վարչապետ Բենիամին Նաթանյահու:

մաքիական գործելակերպը և արագորեն հաղթահարել զոհի բարդույթը: Թուրքական ֆոբիաների վրա հիմնվող ռուսական մեսիանիզմի ժամանակը սպառվել է և ո՛չ ոք այլևս թույլ չի տալու մեզ հետ կրկնել 20-րդ դարի սկզբին տեղի ունեցածը: Ընդհակառակը՝ առաջիկա ամիսներին անգամ ցեղասպան Թուրքիան է փորձելու հարդարել իր արյունոտ կերպարանքը, իսկ ահա Ռուսաստանը **ստիպված է լինելու** իրավահավասար գործընկերության ձգտել Հայաստանի հետ՝ իր դռները բախող Թուրանի առաջխաղացումը կասեցնելու համար:

Մեր ինքնության դեմ ձեռնարկվող հապշտապ գրոհները վկայում են, որ Ղարաբաղյան երկրորդ պատերազմը հրահրողներին անհանգստացրել է համաշխարհային պատմության վերախաղարկման համատեքստում Հայաստանի վերականգնման հեռանկարը: Ուստի ներկայումս մեր առաջնահերթ խնդիրը հայկական ինքնության **ամբողջականությունն** ատամներով պաշտպանելու մեջ է, որովհետև թուրքական գույումի և ռուսական ձուլումի միջև ընտրության պարտադրանքին դիմակայելու խնդիրն արդեն իր այլընտրանքային լուծումներն ունի:

Խմբ:

THE ANATOMY OF IDENTITY CRISIS

Key words - identity, security, reservation, hammer, slab, Sorosians, Rusulmans, Turkish zulum, Russian assimilation.

Edit.

АНАТОМИЯ КРИЗИСА ИДЕНТИЧНОСТИ

Ключевые слова - идендичность, безопасность, резервация, молот, наковальня, соросовцы, русульмане, турецкий зулум, русификация.

Ред.

REFERENCES

1. “Mer anhajoghut’yunneri khork’ayin patcharnerë”, “Vēm”, 2020, N 4 (**In Armenian**).
2. “Ov ē hayë”, “Vēm”, 2017, N 4 (**In Armenian**).